ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— ———————————— 2024 թվականի №—-Ա

«ՀՈՄՆԵԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՀՈՄՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի հոկտեմբերի 23-ի գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու հայտ (այսուհետ՝ Հայտ), որի համաձայն՝ Հայտին կից ներկայացված 2013 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված պայմանագրով Ընկերության միակ մասնակից Կարեն Հովհաննիսյանն իրեն պատկանող՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասի 50 տոկոսը նվիրատվությամբ օտարել է Յուրի Հովհաննիսյանին, իսկ մյուս 50 տոկոսը՝ Միեր Հովհաննիսյանին: Ընկերությունը միաժամանակ հայտնել է, որ հիշյալ պայմանագիրը կնքվել է առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության համապատասխան կարգավորումների չիմացության պատճառով՝ հայցելով Հանձնաժողովի ներողամտությունը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված Հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 28-ի №ՍԱ/34.2-Մ2-8/5102-2024 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը նույն թվականի նոյեմբերի 15-ի №01/11.1/9492-2024 գրությամբ հայտնել է, որ առանց Հանձնաժողովի համաձայնության Ընկերության կողմից կատարված բաժնեմասերի նվիրատվությամբ օտարման

գործարքներին համաձայնություն տալու վերաբերյալ առարկություններ չկան՝ գրությանը կից ներկայացնելով նաև նույն գործարքների առնչությամբ՝ ազգային անվտանգության կամ պետական շահի տեսանկյունից առաջարկություններ և դիտողություններ չունենալու մասին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը,

գ) Հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքների համաձայնեցման մերժման հիմքերը: Պարզվել է նաև, Կարեն Հովհաննիսյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասի 50 տոկոսը Յուրի Հովհաննիսյանին, իսկ մյուս 50 տոկոսը՝ Միեր Հովհաննիսյանին նվիրատվությամբ օտարելու գործարքներն Ընկերության կողմից արդեն իսկ կնքվել են Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության, ինչով պայմանավորված՝ օրենքի ուժով դրանք առ ոչինչ (անվավեր) են:

դ) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի և 34-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթ չի հարուցում, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե հայտնաբերված իրավախախտման կատարման օրվանից անցել է տասը տարի, և

հիմք ընդունելով Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ՝ Ընկերության մասնակից Կարեն Հովհաննիսյանին պատկանող՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասի 50 տոկոսը Յուրի Հովհաննիսյանին, իսկ մյուս 50 տոկոսը՝ Միեր Հովհաննիսյանին նվիրատվությամբ օտարելու գործարքներին:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ Հայտում նշված՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված Ընկերության բաժնեմասերի նվիրատվությամբ օտարման գործարքները կնքման պահից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առ ոչինչ (անվավեր) են:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
---------- 2024 թ.